ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«20» փետրվարի 2018 թվականի № 20-Ն

«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2012թ նոյեմբերի 1-ի N 1431-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ և ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության 2018թ հունվարի 15-ի դիմումը, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2018թ փետրվարի 20-ին տրված՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության» ԲՓ-12 դրական եզրակացությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերությանը 5 տարի ժամկետով տրամադրել նավթի և բնական գազի ուսումնասիրության արտոնագիր թիվ ԵՀՈՒԱ-29/006՝ ՀՀ 2-րդ պայմանական տարածքում.

2-րդ պայմանական տարածք՝

1.Y=8394335 X=4505877 Հայաստանի Հանրապետություն և Թուրքիայի սահման
2. Y=8476285 X= 4505877
3. Y=8476285 X=4461295
4. Y=8485852 X=4461295
5. Y=8485852 X= 4432960
6.Y=8477495 X= 4432960
7. Y=8477466 X=4401765

2. Ընդերքի գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում գրավոր ծանուցել ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում ՀՀ տարածքի նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության և արտադրանքի բաժանման պայմանագրերը իր կողմից վավերացնելու մասին,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո՝ 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի /արտոնագիր, պայմանագրեր/ փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետում պայմանագրերը իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու, ինչպես նաև սույն հրամանի 1-ին կետի պայմանը չապահովելու դեպքում, ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը նավթային գործունեության իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ